The only Advertising Agency for Persia and the Caucasus.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ
№ 5 (25)
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆԱԳՐԱԳԻՆՆ Է
Թաւրիզում . . . . . 20 գրան
Գաւառներում . . . . . 25 գրան
ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ
Ռուսաստան . . . . . 5 բբ.
Թուրքիա . . . . . 50 գրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանգ
Ամերիկա . . . . . 2,50 տօլ.
Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տող տեղը 20 շահի
Չորրորդ ,, ,, 10 ,,
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 8 ՇԱՀԻ

խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ ի խմբագրութիւն կամ Tauris Perse
Rédaction du journal arménien „MITK"
Adresse télégrafique-Tauris „MITK"

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ادارهٔ روزنامهٔ میطق

Anzeigeblatt fuer Persien

MITK
Propriétaire & Editeur en chef
Al. Der-Vartanian
Le Gérant
Mihran Baghdassarian

TERMS OF SUBSCRIPITON
for a year payable in advance. 20 krans.
Foreign Dollars 2. 50
RATES OF ADVERTISEMENTS:
one printing line on the 1-st page 10 cen.
,, ,, ,, ,, ,, 4-th ,, 5 ,,
15% discount for annual subscription paid in advance. Address
The „MITK" Publication Co.
Tabriz. Persia

Published by the „MITK" Publication Co. and Advertising Agency, Tabriz, Persia

Գ. ՏԱՐԻ № 5 (25) ԹԱՒՐԻԶ, ՇԱԲԱԹ 8 ՓԵՏՐՈՒԱՐ 1914 Թ. Tauris, Samedi le 21 Fevrier 1914 №5 (25) Vol. III

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Требуйте и курите папиросы только

Т. Ф. „Бр. Сейлановыхъ"

Египетскія, Ирисъ, Паросъ, Прима, Фрель и Марсъ.

продаются во всѣхъ магазинахъ

ԽՆԱՅՏԵՑԷՔ, ՄԻ՛ ԿՈՐԾԱՆԷՔ ԷՋՄԻԱԾԻՆԸ

(Շարունակութ. և վերջ)

—

«Եւ արդ զինչ. լռեսցո՛ւք զայս մասն անբժշկելի յանցանաց այպանել. և ակն առցուք մարդկան առաւել քան օրէնսցն Աստուծոյ. և ոչ խօսիցեմք զհափանս անձին նախապատուեալ, և զփառս ընաւոչ. . . . . »:

Ներսէս Լամբրոնացի.

—

Յարատեւ, հեզինակաւոր և պատկառազդեցիկ է միայն այն իշխանութիւնը, ուրեմն և Իշխանաւորը, որի ստորոգելիներն են հետևողականութիւն, անաչառութիւն և խիստ կարգապահութիւն (դիսցիպլինա)։ Վերջինիս մէջ տեղից այդ ստորոգելիներից մէկն ու մէկը և կտեսնէք, որ բարոյական կապերի բակտումը, կազմալուծումն ու անարխիան կատարեալ է տուեալ իշխանութեան մէջ։

Ակնարկած փաստի ճշմարտութեան մէջ համոզուելու համար՝ վերցրէք երէկի և, մանաւանդ, այսօրուայ Էջմիածինը, մեր լուսոյ ու լուսոյ այդ դժբաղդ կենտրոնը։

Ցոյց տուէք մեզ մի Լաթուդիկոս, որ շարունակել է իւր նախորդի շինածը, որ հետեւողական է եղել իւր նախորդի տուած այս կամ այն հրամանին և գլուխ հանել նրա սկսածը։ Նորագոյն պատմութիւնից, հինը դեռ մի կողմ թողած, մենք միայն գիտենք օր., որ Գէորգ Մեծագործի փառահեղ յիշատակի—ճեմարանի- լսարանները 10-եակ անգամներ ուղել է փակել Խրիմեանը։ Գիտենք, որ Խրիմեանի շինածը բանդել է՝ ամենայն թիւրիմացութեամբ «երկաթէ մարդ» հռչակուած Իգմիրլեանը։ Իսկ ներկայ Հայրապետի գործունէութիւնից յաւելով գիտենք այն, որ Մեծագործի և Մակարի անապին ճիգերով պատրաստուած ուխտանուէրը, սակաւաթիւ և յաւէտ փոյթալի եկեղեցականները՝ աննեղելիօրէն շարունակում են մեռեալ հայածուած, անպաշտօն, խորթ և անտեսուած։

Կարծես գրութիւնը շատ մելիթոնրական լինէր, որ դեռ հրաւէր է կարգացուում արդէն իր դոյներ վաղուց ցոյց տուած, ուխտադրուժ, աւետարանի պաշտօնեայի սրբազան կոչումը վիսորէն հեգնած մի էքս վարդապետ Ղըլըճեանի։

Մենք միանգամայն հաստատում ենք, որ կարող են լինել «հոգևորականներ», որոնք կուզենային ստուերացնել իրենց տիրապետական բանակը Ղլըճեան և ընկերներով։

Սակայն մեզ իսպառ անբացատրելի է հայոց եկեղեցոյ լրութեան վերահսկողի, նրա խաղաղութեան ի պաշտօնէ պահապանի և ընդհանրական հայրապետի գմտաւ չածելի համակերպումը նման հոգևորականների միջնորդութեանց։ Ինչպէս է արդեօք Վեհը հնարաւոր գտել եկեղեցի, պաշտօն, սքիմ, կոչում ամենայն ժպրհութեամբ երէկ, իբրև «մի ծանր բեռն», մի հոգմ նետած Ղլճեանին վերընդունել ի պաշտօն հոգևոր գինուորութեան։ Մենք մատնել ենք միանգամայն տարակուսած և գայթակղեալ Հայոց Հայրապետի այս անփափկանկատ արարքից։

Որ և է իշխանաւոր, սրբան և բարեացակամ, ներողամիտ և անգամ թոյլ էլ լինի նա, ստանց մեղանչելու հետևողականութեան, անաչառութեան և կարգապահական տարրական օրէնքների դէմ, չի կարող թոյլատրել նման մի երեւոյթ, այն էլ հոգևոր և եկեղեցական կազմակերպութեան մէջ։

Եւ եթէ այսօր կատարւում է երկընաբոգոք և անլուր մի շնորհաշխում՝ վերատին ի կարգ կրօնաւորութեան կոչելով յաւէտ անյանձնարարելի մի Ղլճեանի, դարանում... պատասխանատուն միայն ինքը Օծեալ Տեառն՝ Հայոց Եպիսկոպոսապետն է, որ ունի համարձակ առաջի պատմութեան։

Իրաքանչիւր մի Պետ իր որոշ, անյողդողդ և սեւեռուն սկզբունքներն ու կարծիքները պէտք է ունենայ։ Եւ նա ինքը, իրրև գլուխ, շատ լաւ պէտք է կշռադատէ, թէ ով և ինչ բան կարող է անդարմանելի սպէտների դուռ բանալ, կամ՝ ծագկումն ու բարեկարգութիւն առաջացնել. թէ՝ որոնց պէտք է վանելով վանել, և՝ որոնց գարգուրալ։

Այդպիսի մի Պետի այլ ևս անհնար և անմոյլատրելի պէտք է լինի ուենդրել՝ անգամ բարձրաստիճան միջնորդների, երբ մանաւանդ միջնորդեալի ամբողջ տխուր պատկերն ու փորձը ծանօթ է արդէն ամենքին, և «կլասիկ» գրուածներն ահա հրապարակում։

Այս տրամաբանութեամբ, ուրեմն, պարտ ենք այն անսուտ եզրակացութեան, որ. եթէ Ներկայ մեր Հայրապետը զանազան առիթներով իր անսասան բնաւորութիւնը ցոյց տուած լինէր, եթէ իւր նուիրապետական բարձր պաշտօնում երևան բերած լինէր ինֆլէքսիբլ մի կամք, ապա նրա շրջապատողներից, ոչ որ չէր յանդգնի շարաչեզու Ղլճեանի համար միջնորդել անգամ իր մտքովն անցնել՝ նրա առջև։

Եւ եթէ այսօր մենք գոյժ ենք լրսում, որ կոնդակ է արձակուած արդէն քար դայթակղութեան մի Ղլճեանի վերատին միաբան ընդունելու համար, թէև (ով ինքնախաբէութիւն) այլ վանքում, այդ արդէն նշանակում է որ մենք յանձնուած ենք դիւրաթեք և ընդ ազդեցութեամբ գործող մի Հովուապետի, որ իր կառավարութեան սանձերը բարձ ի թոզի արած՝ վարում է կողմակի թելադրութիւններով։

Վայ, ուրեմն, այդպիսի հովուեալների։

Անգամ, եթէ մոլէր՝ և մոլորուէր ամբողջ միաբանութիւնը և նա հաճ ու հաւան լինէր իր շարքն ընդունել արդէն ծանօթ և տիրատոչակ ասպետ Ղլճեանին, ապա մեր Քահանայապետը մեն-մենակ պէտք է տիրաբար որոտար ամենքի երեսին և հրամայէր.

—Non possimus! և աւելացնէր.

—Մոլորում էք զուր բոլորդ։ Այստեղ կայ գլուխ և պետ, որին յանձնուած է անշքացեալ հայ եկեղեցոյ մաքրագործումը, նրա մինիմումի հասցրած բարոյական վարկի և հմայքի վերազարգացումը և միաբանութեան խախտուած խաղաղութեան երաշխաւորումը, մինչդեռ դուք խելագարօրէն վանք էք վերակոչում բարոյապէս իսպառ վարկաբեկ մէկին, որ տապարը ձեռքին դալիս է կործանելու Էջմիածինը—հայութեան միակ կապը։ Այդ չի կարող լինել և մի, մի ևս Ղլճեան և նմաններ առաջնորդ կենդանի եկեղեցոյ։

Սակայն, ով գարմանք, Հովուապետի հէնց իր իսկ այս անհիքն ու ասելիքը ասում են ազերսաձայն դեռ իր ստորագրեալները մի բողոքով, որին ուշադրութիւն չկայ։ Չկայ՝ որովհետև այնտեղ չի իշխում հաստատակամ ու անայլայլ Պետի կամքը, Պետի, որին ամենից աւելի պիտի հետաքրքրէր իւր՝ եկեղեցոյ վարկի հարցը և այդպիսով նա արդէն աւելորդ և անտեղի պէտք է դարձնէր յայտնի միաբանների պատմական բողոքը, որ ինքնին և իրաւամբ մի ծանր ամբաստանագիր է իր գերագոյն կոչման անգիտակ Պետի հասցէին։ Վա՜յ. . . որ չկայ Էջմիածնում հետևողականութիւն, անաչառութիւն և դիսցիպլինա...

Ուստի և սրտացաւները մատնուած են տարակուսանքի և Հոգևոր Պետի անբարեհաճութեան, փոխան զգուանքի, քաջալերանքի՝ իրրև իրենց ուխտի, կրօնի և եկեղեցական կարգապահութեան նախանձախնդիրներ։

Բոլոր կրօնները, նոցա թւում յատկապէս բրիստոնէականը, մեր աչքում նշանակութիւն ունին լոկ իբրև մարդն ու մարդկութիւնը ներբուռ և բարոյապէս վերածնող ու ազնուացնող զօրութիւններ։

Արդ, իր մէջ բարոյացնող, ազնուացնող ինչ ունի ինքը՝ իր ամբողջ բացասական ֆիզիոնոմիայով բաջամանօթ Ղլճեանը, որ յանդգնում է դեռ ուրիշներին բարոյականացնելու և ազնուացնելու սրբազան պաշտօնը ստանձնել։ Նա՝ինքը դեռ ևս պէտք ունի իւր ներքին մարդու բուժման։ Սեղմամբ աւազանը նրան է ասպատում։ Աւետարանից՝ անգամ իր թշնամու համար ապօթելու պատուէր ստացող Ղլճեանը թունալից ատ-

լութիւնից ՝ացի այլ ազնիւ զգացում չի սնուցանում իր մէջ դէպի իր «միաբանակիցները», որոնց նա կոչել է «պանդխտական» անուամբ. ուրեմն ինչպէս հնարաւոր է այդպէս մէկին բերել վանք և դարձնել նրան «պաշտօնեայ աւետարանի»: Սա ինչ անախօրժելի է և ինչ հեգնանք, որ թոյլատրում է պահակալը էջմիածինի:

Էջմիածինը իր պատմական անցեալով ներկայանում մեր աչքին ցրուած և պետականութիւնից զուրկ հայութեան համար՝ իբրև միութեան մի սրբազան կապ: Իսկ Ղլտճեանի և նմանների այդ սրբավայրին պաշտօնէութեան կոչելը նսեմացնում է մինչև խայտառ՝ այդ երկհազարամեայ վանքի վարկը և ստիպում իւրաքանչիւր մի սրտացաւ հայի վերջնականապէս երես դարձնել այն կենտրոնից և հոգեւորականութիւնից, որի պաշտօնեան ու անդամը լինելու են այդ կոչման անարժան և յանհնարինս վարկաբեկ Ղլտճեան և ընկ.:

Այս բոլորը դերագանցապէս պիտի գիտնար ինքը եկեղեցու պետը և բնաւ տեղիք էլ պիտի չտար, որ բողոքող միաբանները պարզէին, հասկացնէին այդ՝ իրենց զսպուած բողոքով, որը կըրօն ու եկեղեցիով չհետաքրքրուողներին անգամ ցնցում է և զարմացնում, թէ ինչպէս նա, այդ պետը, անհաշտ թըշնամուն է յանձնում բանալին այն ամբոցի, որի պաշտպանութիւնը այդքան վստահացել է իրան-Վեհին:

Օհ, որքան ցաւալի է այս բոլորը և որքա՜ն դառն վիճակը այն մարդոց, որոնք աշխարհ. կեանք, վայելք ուրացան՝ ազգին օգտակար լինելու ցանկութեամբ և որոնք այսօր փոխարինւում են կոչումի դասալիքներով և դարձնում այդ անհանդուրժելի դասալիքների միաբանակիցները:

Գոնէ այդ չէր մեր սպասածը արդի էջմիածնից:

Մենք սպասում էինք, որ վերջապէս կլսենք Էջմիածնից սիրոյ, խաղաղութեան, գրական-բանասիրական նորանոր խուզարկումների, վերաշինութեանց և օրուայ պահանջ եկեղեցական բարեկարգութեան բարձր աւետիսներ: Աւա՜ղ, այսօր լսում ենք ինչ որ Բարարանների գալստեան և Էջմիածնի անդորրութեան խռովքի և բարոյական կործանման մասին, որ ստիպում է մեզ կոչել բարձրաձայն:

—Խնայեցէք, մի կործանէք Էջմիածինը:

Ա. Տ. Վ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Հայկական ռէֆորմների հարցը լուծուած՝ անսպասելիօրէն բարեյաջող ձեւով:

—

Այն, ինչ աչագին սերունդների կոտորմամբ չկարողացանք շահել, ձեռք բերինք Դիպլոմատիայի իւրահամաձայնութեան շնորհիւ այս վերջերս:

Նուբար փաշան ըստ ամենայն յաջողութեան գլուխ բերելով իր միսիան՝ դառնում է Եգիպտոս: Ամօթն ու պատմական նախատինքը կմնայ բաժին կոկոցող ազգային մեր սագերին, որոնք կարծում էին ազգի ճակատագրի հարցի լուծումը միայն իրենց «կապալառուներին» է յատուկ և ոչ Նուբարներին, որոնց դէմ աչագին վայնասուն էին բարձրացրել:

Փոխառութեան խնդրում Ֆրանսիական կառավարութիւնը պահանջ-պայման դրեց հայկական բարենորոգումների անյետաձգելի հարցը, որ ընդունեց Տաճիկ կառավարութիւնը և յետ կանգնեց ընդհ. նահանգապետների և նրանց կողքին միայն Եւրոպացի խորհրդականների իր պահանջից:

Այժմ ռէֆորմ գործադրողները լինելու են ոչ թէ Եւրոպացի խորհրդականներ, այլ Եւրոպացի ընդհանուր նահանգապետներ թւով երկու հոգի, քանի, որ հայկական վեց վիլայէթները բաժանուած են երկու զօնի կամ շրջանի և ամեն մի շրջան ունենալու է մի վերատեսուչ:

Վերատեսուչները հրաւիրուելու են Եւրոպական չէզոք և փոքր պետութիւնների (Շվէյցարիա, Շվեդիա, Բելգիա, Հոլլանդիա) պաշտօնեաներից:

Սոյն յաղթանակի համար հայերս պէ՞տք է երախտապարտ լինինք գլխաւորապէս Ռուսաց կառավարութեան, որ յարատեւ յամառօրէն հայկական ռէֆորմների դժուարալոյծ գործը իրականացման խնդրում: Ռուս կառավարութ. հետամուտ է լինելով փոքր պետութիւնների հպատակներ անձանցից հրաւիրել գեներալ տեսուչներ:

ՕՏԱՐԱՄԱՄՈՒԼԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԴՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

—

1911 թուին դեկտեմբեր ամսում ռեգենտի հրովարտակով արձակուեց Մէջլիսը, որ Մահմէդ Ալի շահի երկրից քշուելուց յետոյ՝ երկու տարի օրինական ու կանոնաւոր և մի քանի ամիս էլ անկանոն՝ նիստեր էր գումարում: Իրենց լիազօրութիւնները երկարացնելու նպատակով պատգամաւորները դիմեցին բացառութիւնների: Բացատրում ու լուսաբանում էր սակայն ոչ թէ սենատը, որը դեռ եւս Պարսկաստանում միայն թղթի վրայ գոյութիւն ունի, այլ ինքը Մէջլիսը և, ինչպէս երեւաց, աննպաստ իր համար:

Ռեգենտի թողած արձակման հրովարտակում յիշուած էր նաև Մէջլիսի հրաւիրման մասին. սակայն ընտրութիւնները սկսուեցին ոչ թէ երկու ամսից յետոյ, ինչպէս խոստացուած էր, այլ երկու տարուց: Եթէ պատգամաւորները հաշուի չառան իրենց լիազօրութիւնների ժամանակամիջոցը, ռեգենտը արդէն իր խոստումների մասին շատ աւելի քիչ մտածեց: Մի Արեւելագէտի կարծիքով սա որ Եւրոպայում պայմանական, մինչդեռ Պարսկաստանում անպայման ու անխուսափելի է: Պարսկաստանի այժմեան կառավարիչները չդաւաճանեցին այդ ազգային սկզբունքին:

Տարունակական յետաձգումներից յետոյ նոր Մէջլիսի ընտրութիւնները սկսուել են միայն այժմ, բայց երբ կվերջանան և կվերջանա՞ն արդեօք երբեւիցէ, այդ չըգիտէ ոչ ոք և նոյն իսկ հէնց իրենք կառավարիչները բացառութիւն չեն կազմում: Սակայն խորտակւող Իրանի փճացման ձայն ունեցող անձնաւորութիւնները, որ այսքան երկար ժամանակ չեն հրաւիրել Մէջլիսը, արժանի են ներողամտութեան: Քիչ չեն նրանց «Մեղմացուցիչ դէպք յանցանացները»: Բոլոր պարսիկները կարող են հաստատել, որ Իրանում վատ է թէ առանց պարլամէնտի՝ և թէ պարլամէնտով: Պարսկական յեղափոխութեան էն ամենից աւելի հերոսական օրերին էլ՝ Մէջլիսն էր գլուխ պատգամաւորութեան կէսը:

Եւ, իրօք. ինչ կարող է անել պարլամէնտը մի երկրում, որի կէսը ոչ միայն չէ ճանաչում Բէլգիական օրինակից արտագրուած սահմանադրութիւնը, այլ և՝ ոչ մի պետական կազմակերպութիւն: Ինչ կարող է անել պարլամէնտը, որի Տաճկաստանում ապրող չորս անդամները, Շիա հոգեւորականութեան գլուխ ներկայացուցիչները՝ իրաւունք ունին ժողովրդի ընտրեալների իւրաքանչիւր որոշման ու տնօրինութեան վրայ իրենց «veto»ն դնելու, յանուն «Սրբազան կրօնի» պահպանման: Ի՞նչ կարող է անել մի երկրի համար այն կառավարութիւնը, որը պարլամէնտից ստացել էր իշխանութիւն առանց կառավարական օրգանների ու գործակալ միջոցների:

Մէջլիսի համար չի մնացել նոյն իսկ ժողովրդական տրիբունի պատուաւոր դերի հեղինակութիւնը, որով նա կարող կլինէր իրաւանց ի չարը գործադրման առաջն առնել: Պարսկաստանում գոյութիւն ունի իրապէս խօսքի անսահման ազատութիւն: Խայտառ ու ծայրայեղօրէն բարեկիրթ պարլամէնտը, որպիսին էր արձակուածը՝ որի անդամները կարողացան վախենալ միայն մերկացումներից, չէր կարող մըրցել ոչ Թէհրանում երբեմնակի լոյս տեսնող թերթ-թռուցիկների դէմ և ոչ էլ՝ Թէհրանի բազարի, որի համար գաղտնիք գոյութիւն չունի: Իսկ ինչ վերաբերում է գաւառին, այնտեղ արդէն մի քանի տարի է որ ոչ միայն չեն հասնում պարլամէնտական ճառերը, այլ և հասարակ նամակները:

Պարսկական պարլամէնտի այս լիակատար թուլութիւնը միայն ներքին բընոյթ կրող պատճառներից առաջ չէր գալիս: Պարսկաստանի չափազանց յետամնաց քաղաքացիական կեանքը խոչընդոտների է հանդիպում և դրսից: Պարսկաստանը, աշխարհի ամենաթոյլ այդ թագաւորութիւնը, աշխարհագրականօրէն սեղմուած է երկու խիստ ուժեղ կայսրութիւնների մէջ: Իբր Հնդկական սահմաններին աչալրջութեամբ հսկող Անգլիան և մօտ ժամանակներումս միայն Միջին Արեւելքում իր բացարձակ յարձակողական շարժումները վերջացնող Ռուսաստանը հետամուտ են եղել Պարսկաստանին աւելի քան հարկաւոր է մի անկախ թագաւորութեան: Հետեւանքն այն եղաւ, որ Պարսկաստանը կորցրեց իր անկախութեան նշանաւոր մասը: Քանի դեռ Պարսկաստանը Անգլիայի և Ռուսաստանի համար, հանդիսանում էր վերջին բարիերը երես առ երես ընդհարուելուց առաջ. նա, այդ բարիերը, գոյն հոգատարութեամբ պահպանւում էր և այդ հանգամանքը անօգուտ չէր Կաջարեան դինաստիայի համար. որը ձեռք էր բերել իշխանութիւն՝ ընկած կուլտուրայով մի ժողովրդի վրայ: Բայց հէնց որ Անգլիան և Ռուսաստանը դադարեցին իրար որպէս անհաշտ ու ոխերիմ թշնամիների նայելուց, հէնց, որ համաշխարհային քաղաքականութեան հարցերը երբեւէ համաձայնութեան կազմակերպութեան հետ հրապարակ նետեցին Ռուս-Անգլիական համաձայնութիւնը Միջին Արեւելքի գործերի շուրջը—Պարսկաստանը զրկուեց իր անկախութեան վերջին մնացորդներից: Վերջին հարիւրամեակում Անգլիայի և Ռուսաստանի շահերը խիստ սերտ հիւսուեցին Պարսկաստանի շուրջը, ուստի և իրար մէջ համաձայնութիւն կայացրած այդ պետութիւնները չէին կարող յետ կանգնել Պարսկաստանից: 1907 թուականից արդէն Անգլո-Ռուս դիպլոմատիան սկսեց նայել Պարսկաստանի, որպէս իր գաւառի վրայ, որը սակայն լաւ կազմակերպելու դեռ եւս ժամանակ չունէր:—Թող պտուղը հասունանայ վերջնականապէս-ասում էին անգլիական դիպլոմատները: -Թող այդ փթւածքը վերափթի-ասում էին ռուսական դիպլոմատները Պարսկաստանը ըստ ազդեցութեան շրջանների՝ բաժանելիս: Ու այժմ թող շարունակեն այդ հնարքները, լինի դա Ֆիլիպ գերմանական ձեռնարկողների հետ կամ հրաւէր անցեալում կօլոնիզատոր Ամերիկացի Շուստերին, դիկտատորական գահի համար:—Դոքա միայն կստեղծեն տհաճութիւններ թէ՝ մեզ և թէ՝ իրենց համար: Մենք ժամանակ չունենք զբաղուելու պարսկական անարխիայով և ոչ էլ օգուտ...Անհրաժեշտ է արդեօք ասել, թէ ինչպէս էր անդրադառնում պարսկական կեանքի վրայ այս «չթողնել և չտալ»-ը:

Սակայն ժամանակը չէ արդեօք կատարելապէս այլ ձեւով վերաբերւելու, խորապէս դժբախտ, խաղաղ և ոչ մի պատերազմական աւանդիւրայի ընդունակ պարսիկ ժողովրդի հետ: Եթէ Պարսկաստանի բախտը կապուած է Ռուսաստանի ու Անգլիայի հետ—արդեօք երեք երկրների շահերն էլ չե՞ն պահանջում դադարեցնել փթելու ուժեղ ընթացքը ու չստեղծել արհեստական անապատ: Պարսիկ հայրենասէրները հարեւան պետութեանց այսպիսի նոր քաղաքականութեան առաջին քայլերում թերեւս հրապարակ կնետէին Իրանի սեփական, ինքնուրոյն ուժերով վերածնութեան անիրագործելի ցնորքը: Մասնաւորապէս Ռուսաստանը, որ ցայ իր ծայրագաւառներից և ոչ մէկում առաջ չէ մղել զգալի տընտեսական ճնշումն առաջ բերող, այսպէս ասած, կօնօլիալ քաղաքականութիւն, պէտք է հրաժարուի նաև Պարսկաստանը տնտեսապէս խեղդելու սիստեմից մի սիստեմ, որ կքայքայէ ռուսական գանձարանը և զուցէ միայն կբերի մի օգուտ խումբ ֆաբրիկանտների:

Այնպիսի պայմաններով, ինչպիսին է Ռուսաստանի վրայով Պարսկաստան հասցէագրուած փոքրիկ փոստային կապոցների տրանզիտի արգելումն, չէ որ մենք պիտի վաստակենք պարսիկների համակրանքն ու ամրապնդենք մեր պրեստիժը Պարսկաստանում:

Միայն Անգլիայի և Ռուսաստանի իրական բարեացակամ յարաբերութեամբն է որ Մէջլիսը կկարողանայ ձեռնարկել Պարսկաստանը կուլտուրական պետութիւն դարձնելու գործին: Մինչդեռ ներկայ դրութեամբ պարսկական պալատը կմնայ որպէս պարսից ժանգոտած պետական մեքենայի թափահարուող անիւը, առանց շարժիչ խրայի:

«Русс. Сл.» Յունվ. 21 №-16.

Թարգ Ա. Մ. Աբրիմ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՑ ՍՏԱՑՈՒԱԾ ԼՈՒՐԵՐ

—

Թէհրանից տեղեկանում ենք, որ շուտով Սարդար-Մուինը ճանապարհուելու է Քիւրդստան: Սարդար-Մուինը երկար ժամանակից ի վեր նշանակուած էր Քիւրդստանի նահանգապետ, սակայն մեզ անյայտ պատճառներով մինչև այժմ

ձգձգում էր իր պաշտօնավայր երթալը…

—

Այսօր Թէհրանից քաշուած մի հեռագիր յայտնում է, որ տեղիս Նահանգապետ Հաջի Մուխբիր-էդ-Դովլէն, պաշտօնանկ է եղած։ Մի ամսից աւելի այս լուրը կար, բայց այսօր է միայն հաստատւում։

Նրա տեղ նշանակուած է նախկին Նահանգապետ Սաադ-Դովլէն, միապետական փթած գաղափարներով տոգորուած մէկը։

Հաջի Մուխբիր-էդ-Դովլէն զարգացած, սահմանադրական, ազատասէր մի մարդ է։ Մի քանի անգամներ քարգուզարի պաշտօն է վարել։ Մի խօսքով՝ նոր նշանակուածից շատ բարձր մարդ էր։

—

Թէհրանի կարգադրութեամբ Գիլակներից էլ ընդունւում են կօզակների զօրագնդի մէջ։ Մինչև այժմ Գիլակներից չէին ընդունվում։

Վերջերս գիւղերից բաւական մեծ թւով գալիս և արձանագրւում են։

—

Տահզադա-Օմիդ-Դովլէն, որ նշանակուած էր Թալիշի նահանգապետ, ամիս և կէս է ինչ այստեղ էր հասել։ Բայց չէր համարձակւում իր վեց քիւրդ ծառաներով պաշտօնատեղին գնալ… որի համար և գիժել էր Թէհրան և սպասում էր կարգադրութեան։

Երէկ Թէհրանից հրաման ստացաւ յիսուն կօզակով անյապաղ ճանապարհուել իր պաշտօնավայրը։ Կայց ճանապարհուելու է, բայց դժուար թէ կարողանայ այն տեղի իշխան, կիսանկախ Սարդար-Ամջադի որդու ձեռքից, առանց մեծ զոհեր տալու, նահանգապետի պաշտօնն իր ձեռքն առնել և անջատուած Թալիշը կենտրոնական իշխանութեան հետ կապել։

13 յնվ. Ռաշտ. Գ. Ռշտունի

ԳՐԱԿԱՆ

ՍԻՐՈՅ ԳԱԼԱՐՈՒՄՆԵՐ (երգ)

—

Լալիս եմ թագուն լուռ ու մենակ,
Քո ցաւից սիրտս դողում է յուզուած.
Վճիտ արցունքներդ աչքիդ կապուտակ,
Ինձ համար ցաւ են ու վիշտ տխրամած։

—

Ախ, կուզենայի, որ սպունգի պէս
Ըծծէի սրտիդ վիշտ, ցաւն ու կսկիծ,
Ըծծէի անվերջ, քամէի իսպառ,
Սրտիդ տառապանք, քո ծանր թախիծ։

—

Եւ աչքերիդ մէջ արցունքի փոխան,
Ցոլային կրկին ժպիտ ու բերկրանք.
Դու իմ սրտի տէր, Աստուածն ու իշխան,
Եւ սէրդ լինէր միշտ ինձ խրախուսանք։

—

Եւ աստղերիդ պէս քեզնից անբաժան,
Լոյս վայելէի քո սրտի բերկրանք,
Որ քեզնից առաջն երգէի միշտ քեզ,
Քո անշիջուած սրտիդ իբրև սփոփանք։

Ղալասար Արամ Բաբայեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԹԱՑԻԿ ԿԵԱՆՔԸ ՈՒՐՄԻՈՒՄ

—

17 Յունվար Ուրմի

(Սեփ. թղթակցից)

Վերջապէս շարժուեց… Ուրմիոյ հայութիւնը։ Լեթարգիական քնից սթափուած՝ կենդանի շարժումներ է անում. թունաւոր անտարբերութեան կաշկանդումներից թօթափուած՝ նա ինքնագիտակցութեան նշաններ է ցոյց տալիս։ Վերջերս ամեն ինչ մխիթարական է, իսկ եթէ այդպէս շարունակուի նոյնիսկ նախանձելի կդառնայ Ուրմիոյ հայութեան վիճակը։ Թատրոն, Դրադարան և մանաւանդ դպրոցական ֆոնդ, գեղեցիկ են այս ամենը և ոգևորիչ։

Ի՛հարկէ բաւական չէ ձեռնարկելը, սկսելը, պէտք է ի կատար ածել սկսածը։ Աւելի լաւ է բոլորովին չանել, քան թէ սկսել և թերի թողնել։

Ուրմիոյ հայութիւնը կանգնած է մի շարք մեծ կարիքների հրամայողական պահանջների առաջ. դրանցից ամենագլխաւորը և անյետաձգելին առ այժմ դպրոցն է, որ օրուայ հարց է դառել։

Աննկուն կամքով ու եռանդով օժտուած գործիչներ են պէտք, որ սկսածները գլուխ գան և այս ազգերի ցուցահանդիսում (Ուրմին) պարզերես լինինք։ Գոնէ դպրոցական շէնքի հանգանակութիւնը, որ արդէն 6000-(վեց հազար) րուբլու է հասել, չպիտի թողնել որ սառչի. նշանները լաւ բան չեն խոստանում։ Հոգաբարձութեան ջանքերն ու ոգևորութիւնը գովելի էին, երբ նա եկեղեցու բակում, ծննդեան հանդիսաւոր պատարագի ժամանակ, ձեռնարկեց այդ հանգանակութեանը։ Խօսք չկայ, որ եթէ քիչ էլ ձգձգուի՝ հոգաբարձութիւնն ինքը պիտի շարունակի և վերջացնի այդ գործը, եթէ ոչ կարող է ընդմիշտ սառչել։

Հոգին թէ այդպիսի պատեհ առիթ լինի։ Ո՛վ ինչով կարող է թող օգնէ և չխնայի իր աջակցութիւնը, թող քաջալերի, թող օգնութեան ձեռք կարկառի՝ մէկդի դրած գծուծ հաշիւներն ու մտքերը, որ գիտակից ու լուրջ մարդուն վայել չէ։

Առանց դրանց այդ ազգային-կենսական անհրաժեշտ ձեռնարկութիւնը, ուրիշ շատ ձեռնարկութիւնների նման, կարող է իր կէսում կանգ առնել և բաւական է մի որոշ ժամանակ անցնի վրայից, մոռացութեան գիրկը կանցնի ու կըչքանայ որպէս քաղցր և անհասկանալի երազ…

Գործնական լինելու համար պէտք է անյապաղ տեղն առնել և ձեռնարկել շինութիւնը, և դրա հետ զուգընթացաբար միացած ուժերով շարունակել հանգանակութեան գործը։ Այսպիսով դպրոցական շէնքը գլուխ գալու աւելի մեծ հաւանականութիւն ունի, քան թէ սպասել որ հանգանակութեան գումարն աւելի մեծանայ կամ լրանայ։

Մենք աւելի լաւատես՝ լինելով գործը գլուխ գալուն համար՝ աւելորդ չենք համարում մի առաջարկութիւն անել գործավար պարոններին։

Ակներև է, որ կուլտուրական համարուող մի ժողովրդի համար դպրոցի չափ կարևոր է նաև թատրոնը, իսկ Ուրմիայի հայը չունի գոնէ քիչ թէ շատ տանելի յարմարութիւններով մի թատերասրահ. եթէ չհաշուենք այն փոքր, երբեմնի դպրոցի շէնքը, որ վերածուած է թատերասրահի։

Խօսք չկայ, որ մարդիկ գալիս են թատրոն, հոգեկան բաւականութիւն ըստանալու, այն ինչ ներկայ «Թատերասրահը» իր անյարմարութիւններով աւելի շատ դժգոհութիւնների տեղիք է տալիս քան թէ բաւականութիւն պատճառում։ Իսկ հասարակութիւնից կարճ ժամանակում թէ՛ դպրոցական շէնքի և թէ՛ թատերասրահի համար փող պահանջելն էլ կլինի տանուագն անբարեխղճութիւն, մանաւանդ հնարաւոր էլ չէ այդ։

Ուստի, լաւ կլինէր, պ. պ. գործի գլուխ անցնողները, ովքեր էլ լինեն դրանք, ի նկատի ունենային այդ խիստ կարևոր խնդիրը և դպրոցական շէնքը պատրաստել տային այնպէս, որ իր մէջ ունենար նաև թատերասրահ։ Մեր կարծիքով՝ դա ոչ առանձին ծախք է պահանջում և ոչ էլ մանկավարժական յարմարութիւնները կը տուժեն դրանով. ընդհակառակը, դա կլինի մի էկօնոմիա, որով կարելի է երկար տարիներ թատերասրահի առանձին շէնքի կարիք չզգալ։ Մեր ասածը պարզենք։ Դպրոցի շէնքը ութ սենեակ անպատճառ կունենայ. դրանցից չորսը մի կողմ, չորսն էլ մի կողմ. ճարտարապետական ուղութեամբ եթէ կառուցուին՝ մէջտեղը կմնայ մի երկար և ընդարձակ կորիտոր, որը և կծառայէ իբրև սպասալի թատերասրահ, իսկ անձրև և ցեխ օրերին աշակերտների համար իբրև զբօսնելու տեղ։ Ահա մեր ասածի մօտաւոր պլանը։*

Հ. Ժամկոչեան

ՁՈՒԼՈՒՄՆԵՐ

—

20 յունվար, Միանդաբ

(Սեփ. թղթակցից)

—

Աղաների կեղեքումներին ու հարստահարութիւններին վերջ չկայ. նրանք շատ տեղերում անպատիժ կերպով իբրև վամպիր ծծում են ժողովրդի արիւնը։ Հայրս կապալարութ. . . ծ, Աստուած դրանց ինսաֆ տայ, դեռ փառք աղաներին։

Սէյիդ Միր-Թաղի և սէյիդ Միր-Սուլէյման եղբայրները Սոլթափան հանգիստ Տիլաւայում (Միանդաբից 50-60 բաղէ հեռաւորութեան վրայ ընկած գիւղեր) և Ենկի գիւղի (Մարաղայի) ճիշտ կէսը կապալով են վերցրել մի քանի տարուայ համար՝ տարեկան 4000 թումանով։ Սրանք շատ հարստանալու, շատ փող դիզելու տենչից բռնուած աջ և ահեակ հարստահարում (խօսքս առաջին երկուսի մասին է. վերջին Ենկի գիւղից իրազեկ չեմ) «բեռը ծանրացնում» են, տուրքն աւելացնում և ուրիշ զուլումներ անում. Օրինակ՝ գոմի խարջին, որ առաջներում մինչև $12^1/_2$ դամ էր, բարձրացել է $19^1/_2$-120 դամ, իսկ այգու սէֆին 55 դամից վերածել $63^1/_2$ դամ թումանի։ Միջանկեալ ասեմ, որ այս տուրքերն ի հնուց որոշուած կարգադրուած են, կալուածատէրերը, որքան ինձ յայտնի է, չեն իրաւունք բարձրացնել ձեռնամուխ լինել. Բայց շարունակենք դրանց սխրագործութիւնները։ Մի համբալից տեղ կըտրում, տալիս են մի ուրիշին և իբրև թարիֆ (կաշառք) վերցնում 15-20 թուման։

Եւ սա դեռ սկիզբն է երկունքս։

Այդ սէյիդները, տեսնելով գիւղացիք անմռունչ տանում են բոլորը, ծայր աստիճանի հասցրին իրանց անգութ կամայականութիւնը և մի գեղեցիկ օր յայտարարեցին ի լուր այգետէրերի. — Դուք յետ այսու երբէք իրաւունք չունէք ձեր այգիների ամբողջ արդիւնքները վայելելու, կէսը պատկանում է մեզ։

Ոսկորը դանակին էր հասել. Սոլթափաեցիք, չկարողանալով այլ ևս հանդուրժել, հեռագրով դիմեցին Հաճի Շոջա-էդ-Դովլէին, որից պատասխան՝ հրաման ստացան փոխել Թուրքիզ կապալառուների ներկայութեամբ գործին մտիկ տալու։ Եւ իբրև լիազօր-ներկայացուցիչ ճանապարհուել են արդէն չորս հոգի, որոնք առաջ անցնելու են Մարաղա, Հաջի Զիադ Դիւանից յանձնարարական թուղթ ստանալու առ Նահանգապետն՝ ի պաշտպանութիւն իրանց դատի և միանգամայն խնդրելու, որ կրկին բարեհաճէ ինքը. Հաճի Զիադ-Դիւանը՝ վարձել գիւղը, եթէ միայն կարելի լինէ, որից այնքան գոհ են թուրք, քուրդ և հայ (5 տուն) բնակչութիւնը։

Հետևանքի մասին կաշխատեմ գրել իր ժամանակին։

Ա. Խ. Մ.

* Այս յօդուածը պիտի հրատարակուէր նախորդ համարում, սակայն նիւթերի շատութեան և հերթի լինելու պատճառով՝ մնաց այս համարին։ Մ. Խ.

ՆԱՄԱԿ ՈՒՐՄԻԻՑ

—

22 Յունվար

Անդրանիկ ժողով

Պատճէն արձանագրութեան։

Յունվար 21-ին (1914 Թ.) դպրոցական շինութեան յանձնաժողովը կայացրեց իր Անդրանիկ ժողովը Ուրմիոյ լաջորդարանում։

Օրակարգի հարցերն էին՝

1 Ատենապետի, Գանձապահի և Ատենադպրի ընտրութիւն։

2. Փողերի գանձումն։

3. Հողի գնումն։

4. Ուրմիայից դուրս մասնաւոր հանգանակութիւն բանալը։

Միաձայն ժողովը ընտրեց՝

Ատենապետ՝ պ. Գ. Մանասէրեանց

Գանձապահ՝ պ. Հայրապետ Հարութ.

Ատենադպիր՝ պ. Յովսէփ Աֆթանդիլ.

Ժողովը վճռեց՝ պատրաստել տալ տըպագրութեան ընկալագրեր, գնել մատեաններ հաշուապահութեան համար, փողերի գանձումն անմիջապէս և շարունակել հանգանակութիւնը։ Ընկալագրերը պէտք է ստորագրեն պ. պ. Ատենապետը, Գանձապահը և Ատենադպիրը։ Հանգանակուած փողերը պիտի դրուեն եղբ. Մանասէրեանց և եղբ. Նահգեալդեանցների մօտ 100-ին 10 տոկոսով։ Ժողովը վճռեց հողը գնել ոչ պակաս մէկ թանաֆից (4096 պարսկական արշին)։ Ժողովը օգտուելով իր անդամ պ. Յ. Նահգեալդեանցի ճանապարհորդութիւնից՝ տուեց լիազօրութիւն յիշեալին՝ անել մասնաւոր հանգանակութիւն իրեն ծանօթ շրջանում։ Ժողովը փակուեց ժամը 6-30 ր. անց։

Նախագահ՝ Խորէն վարդապետ, Ատենապետ՝ Գ. Մանասէրեան, Գանձապահ՝ Հայրապետ Հարութեան, Ատենադպիր՝ Յովսէփ Աֆթանդիլեան։

Խորհրդականներ՝ Յ. Նահգեալեան, Խ. Սւագեան, Ա. Աֆթանդիլեան, Մնացական Յակոբեան։

—

25 յունվ. Ենգիջէ

(Սեփ. թղթակցից)

—

Երեկ Բագուէից «Ժանդր» նաւով 280 կազակ զօրք եկաւ Ղազվին գնալու համար։ Ինչպէս լսում ենք զինուորական շրջանից, Ռուսաց զօրքը պատրաստւում է Պարսկաստանից դուրս գալու։ Սակայն որոշ չէ, թէ բոլորը պիտի գնան՝ թէ մի որոշ մասը։

Ամսիս 11 ին Ռուսաց նոր դեսպանը Ենգիջէի հասնելով՝ փառաւոր ընդունելութիւն եղաւ թէ՛ Ռուսական գաղութի և զօրքի կողմից, և թէ պարսից կառավարութիւնից։ Ռաշտից յատկապէս դիմաւորելու էր եկել դատաւորը։ Մի քանի դէպք պատահեց այդ օրը։

Թէհրանից բերուած փոքրիկ թնդանօթի հետ եկած 2 թնդանօթաձիգներից մէկը մնաց թնդանօթի առաջում և խեղճ երկու թեները պուկ եկան։ Ինչպէս լսեցի, դեսպանը խոստացել է դժբ. ղդի ընտանիքի ապրուստի միջոցը ապահովել։ Համաձայն տեղիս Ռուսաց վէց կոնսուլ Պ. Ի. Սիմէլովի կոմից եղած յայտարարութեան, այս օր երեկոյեանը ժամը 3-ին քաղաքի դիմաց, հաւաքուած բազմութեան առաջ, Ղազեան կոչուած ծովեզրում Ռուս յայտնի օգաթռիչ, Կուզմինսկին աէրոպլանով թռիչք կատարեց։ Երօրհիւ եղանակի լաւութեան թռիչքը շատ յաջող անցաւ։ Առաջին անգամին մենակ 25 բոպէ պտոյտ գործեց թէ ծովի՝ և թէ ցամաքի վրայ։ Երկրորդ անգամին վէց կոնսուլի կինը ցանկութիւն յայտնեց, որ «նա էլ եմ նստիմ» նոսեր. ատկաին յարգելի տիկինը վախենալով ծովի վրայի պտոյտից՝ ամաչեցին։ Երբոբգին Կուզմինսկին մենակ թռաւ։ Հաստատութիւնը գոյ մնաց։

Որպէս լսում ենք, պ. վէց կոնսուլը Կուզմինսկուն ցանկութիւն էր յայտնել, որ թոյլ տրուի առանց տոմսակի՝ դղրոցս, հարց. պ. դպրոցի աշակերտութեան ականատես լինել թռիչքին, սակայն նորագոյն գիտութեան ներկայացուցիչը մերժել էր հայոց և պարսից դպրոցների աշակերտներին, տարակելով, որ եթէ նրանց համար հետաքրքիր է թռիչքը վճարեն*) և դան տեսնեն, իսկ թոյլ է տուել միայն ռուսաց դպրոցի աշակերտութեան։

ԱՆՀԱՅՏ

*) Ուրիշներից վճարել պահանջող պ. Կուզմինսկին չվճարեց «Մեղք»-ին իր յայտարարութեան 30 ղուռանը և տեղից փառաւոր գումար հաւաքելուց յետոյ, հեռացաւ առանց իր պարտքը վճարելու։ Մեր պահանջի վճարման մասին խնդրում ենք ռուսաց հիւպատոսարանի բարեհաճ ուշադրութիւնը։

Ս. Խ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծապատիւ Պրն.

Միհրան Բաղդասարեանին

Աստ.

Բարի եղէք խնդրում եմ դադարեցնել ինձ, Ձեր անօրինութեամբ հրատարակուող թերթի առաքումն։

Յարգանքներով Մ. Սահակեան*)

26 Յունվար 1914

Թաւրիզ.

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

Նախորդ համարում սպասել էին մի քանի վրիպակներ. առաջնորդողում «առանձին նախաձեռնութեամբ» պիտի լինէր առանձին նախանձախնդրութեամբ». «Թերեսիդէս»-ի՝ «Թերսիդէս»։

◆ Մեր լրատուն մեզ հաղորդել և նախորդ համարում գրել էինք, որ Ալիսուի դպրոցների յոբելեանական յանձնաժողովի նախագահ է ընտրուել պ. Կ. Արիան, պիտի լինէր պ. Զ. Նազարբէգեան. առաջինը փոխ նախագահ է։

◆ Խմբագրութիւնս խնդրում է իւր յարգոյ ընթերցողներից և բաժանորդների ներողամտութիւնը, որ խմբագրիս ոտքի վնասուած և անկողնու դատապարտուած լինելու պատճառով, թերթիս սոյն համարը ըստ պատշաճի ճոխ հրատարակելու հնարաւորութիւն չի ունեցել և մամուլի ու քաղաքական բաժինները մնացել են թերի։

◆ Մեր թերթը հատավճառ ծախսում է և Էիլաւայում՝ պ. Արիստ. Տէր Գրիգորեանի մագազիններում պ. Սրապիոնի մօտ։

◆ Յաջորդ համարում կհրատարակենք հայ Լիբերալիզմի հայր Գր. Արծրունու մի յօդուածը՝ վերաբերեալ հայոց կաթողիկոսութեան, եկեղեցուն և հոգևորականութեան։

◆ Յունվ. 28-ին լոյս տեսաւ և բաժանուեց «Միտք»-ի մի (պարսկերէն) համար, բովանդակելով և այն յօդուածները, որոնք այլ տարի լոյս էին տեսել «Միտք»-ում։ Պարսկերէնի բովանդակութիւնն է. 1) Գիտութիւն և ազգութիւն (առաջնորդող). 2) «Միտք» ի (պարսկերէն) առաջարկ-իդէները. 3) վաճառականութիւնը իբրև երկրի կենդանացող մի ոյժ. 4) ազգատախնամ և որբանոցների բացումը. 5) Սրփահդար-Ազամի որբանոցը Թէհրանում. 6) ինչ կամենում է Աստուած՝ տեղծում և դրա միջոցները. 7) Ռաշտի ազգատախնամը. 8) Ռաշտի փողոցների սալայատակումը. 9) Թաւրիզի փողոցների լուսաւորական կեդրը, ցեխը և ապականութիւնները. 10) Թէհրանի Դարվազա Ղազվին թաղի պարսկական ազգատանոցը. 11) բարեգործական հաստատութիւնները և պարսիկ աղջիկների ու տղաների փողոցներից հաւաքումը. 12) արտաքին լուրեր. 13) 10 միլիոն ֆրանկի վիճակախաղը։

◆ Յունվ. 29-ին Արամեան դպրոցի հոգաբարձութեան պ. նախագահ և քաղաքային հիւանդանոցի բժշ. Դր. Վահան Գէորգեանը և տեսուչ Ա. Տէր Վարդանեանը ներկայանալով գեն. նահանգապետ հաջի Շօջա-էդ-Դովլին ներկայացրին խնդրագիր՝ իր բարձր հովանաւորութեան ներքոյ վերցնել յօգուտ դպրոցի տալիք մի թաւրքերէն ներկայացում։ Գ. նահանգապետը հաճեց ընդունել խնդիրը։ Ուսուցչական խումբը պատրաստում է ներկայացնել Մոլիեռի «երևակայական հիւանդը», թարգմանութիւն հանգ. Միրզա Ատատուր Փանուէլեանցի։

◆ Յունվ. 30-ին հաջի Շօջա-էդ-Դովլէն հրաժեշտի ճաշ է տուել Թաւրիզից մեկնող հիւպատոսական պաշտօնակատար պ. պ. Պրիաբրաժենսկուն և Ա. Թալզման Վեղենսկուն։ Հայերից հրաւիրուած և ներկայ են եղել պ. Դր. Վահան իր կնոջ հետ, պ. Յ. Վարդանեանն իր կնոջ հետ և վաճառականապետ պ. Զ. Նազարբէգեանը։

Յունվ. 31-ին քաղաքս ժամանեց Ատրպատականի ռուսաց գեն. հիւպատոս պ. Օրլովը, որին ցոյց տրուեց դեսպանական ընդունելութիւն։ Կային անհամար կառքերով և ձիերով ընդառաջողներ, 10 եռակներով եղակներ. կար 3 զինուորական երաժշտախումբ։ Խփուած էին Աջի գետի միւս ափին բազմաթիւ վրաններ՝ ընդունելութեան համար. միայն «լիմար կոյսերի»դերն ատանձած հայերն էին, որ չունէին վրան և ոչ բերի պէս՝ մնացել էին դուրսը և այս ու այն վրանում ծուատուած։ Ամօթ. Կասսենք յաջորդ անգամ։

◆ Փետրուար 1-ի գիշերը, շաբաթ, տեղիս ռուսահպատակ մի խումբ հարուստ հայեր Ալաղափում հրաժեշտի և պատուոյ ընթրիք տուին պ. Պրիաբրաժենսկուն և Վվեդենսկուն։ Ինչպէս լսում ենք այդ փառահեղ հացկերոյթին հրաւիրուած են եղել 70, իսկ ներկայ են եղել 56 հոգի։

◆ Պ. Պրիաբրաժենսկին հիւպատոսի պաշտօնով ամսիս 5-ին, չօրեքշաբթի, մեկնեց Սպահան։

Պ. Վվեդենսկին ամսիս 2-ին թողեց Թաւրիզը և մեկնեց Ուրմի որպէս այնտեղի հիւպատոս։

◆ Թերթիս խմբ. հրատարակիչն արտօնութիւն է ստացել հրատարակելու պարսկ. մի թերթ «Խօրշիդ» (Արև) անուամբ, նուիրուած պարսիկների խաղաղ կուլտուրական զարգացման։

ԵՏՐՈՊԱՅԻՆ

Մարաղից յայտնում են, որ Սալմաստցի Ազիզ անունով մի թուրք՝ Իմամ Զադա մաշիդի մոմերն ու ծածկոցը գողանալիս է եղել և այդ միջոցին կառավարական մարդիկ նրան բռնելով տանում են գաւառապետի մօտ, որ հրամայում է մեխել նրա ականջը սիւնին։ Պատիժն ի կատար է ածում «ալիւրի մէջդան» կոչուած հրապարակում։

Стремленія еропейскихъ правительствъ въ Малой Азіи.

Со второй половины 18-го столѣтія европейскія державы, въ особенности Россія, Германія и Великобританія приступили распространенію своихъ политическихъ и коммерческихъ вліяній въ разныхъ мѣстностяхъ Малой Азіи. Каждое изъ поименованныхъ государствъ послѣ упорныхъ усилій смогло наконецъ, создать себѣ въ этой злополучной странѣ опредѣленную сферу дѣятельности во вредъ интересамъ турецкаго правительства. Порта Оттоманская, владѣющая по праву наслѣдства этимъ весьма плодороднымъ плоскогоріемъ, всегда старалась выставлять разнообразныя препоны посягательствамъ державъ съ цѣлью освободиться съ ихъ постоянныхъ вмѣшательствъ въ малоазіятскія дѣла. Активное вліяніе державъ день ото дня пріобрѣтаетъ рѣшительную силу, особенно по окончаніи балканскихъ войнъ, кои останутся въ лѣтописяхъ Турціи самыми плачевными актами. Европейскія правительства съ самаго начала сей войны, извѣстной своими позорными для Турціи послѣдствіями, прибѣгаютъ къ разнымъ мѣропріятіямъ для болѣе яснаго опредѣленія своихъ вліятельныхъ зонъ въ областяхъ Малой Азіи

Между великими державами нынѣ существуетъ по сему вопросу соперничество. Очевидный фактъ, что каждая изъ нихъ стремистя присвоить себѣ извѣстную долю малоазіятскихъ вилаетовъ. Интересы армянъ требуютъ, чтобы Россія завоевала Арменію и нѣсколько областей Малой Азіи съ намѣреніемъ дойти черезъ Александретту до береговъ Средиземнаго моря. Стремленія нѣмцевъ еще идутъ дальше; они изо всѣхъ силъ стараются сдѣлать нѣсколько территоріяльныхъ завоеваній по отношенію къ постройкѣ багдатской желѣзной дороги на простространствѣ между Мармарнымъ моремъ и до сѣверныхъ границъ Месопотаміи; у нихъ большое вожделѣніе владѣть Іерусалимомъ и вилайетомъ Адана, гдѣ уже завели нѣсколько учебныхъ заведеній и торговыхъ агентствъ. Что касается Франціи, то можно откровенно сказать, что она хочетъ быть владичицею нѣсколькихъ областей въ Сиріи. Италія намѣрена имѣть нѣсколько стратегическихъ пунктовъ на прибрежныхъ мѣстахъ Анатоліи по поводу своихъ политическихъ и финансовыхъ видовъ. Англія желаетъ пріобрѣсти нѣсколько городовъ въ южной Киликіи. Европейскія державы пока не приступаютъ къ приведенію въ исполненіе проекта дѣлежа, то лишь потому, что между ними еще ие установлено окончательнаго взаимнаго согласія относительно демаркаціонныхъ пунктовъ своихъ будущихъ владѣній въ малоазіятскихъ областяхъ.

Лев. Кеворковъ

ՊՕՍՏԱՐԿՂ

Ուրմ.–Ա. Միրզաջանեանին, արդէն ուղարկուել են Ձեզ տեղիդ բոլոր բաժանորդների անդորրագրերը։ Որպէս առաջ ապատում ենք դրամի առաքման։ Խնդրում ենք բոլոր տեղերի պ. պ. գործակալներին և բաժանորդներին մանել մեր դրութեան մէջ և ակնթարթ առաջ մեզ հասցնել մեր դրամները։ Արդէն բացատրել ենք, որ ամսէն 60 թուման ծախսի ենք ենթակայ, պէտք չկայ կրկնելուս այդ ցաւալի հարցը։ Սպասում ենք...։

Ռաշտ.–Ներսինին. Շնորհակալութեամբ ընտացուած Ձեր նամակների դէղերը կհրատարակուին ըստ հերթի։

Թաւրիզ.–«Փայլ» գրադարանի վարչութեան Ձեր նամակը յաջորդիւ։

Սովուշ Բուլաղ–Պ. Տ. Յովհ.–ին. ստացանք շնորհակալութեամբ ի հաշիւ տեղիդ բաժանեցների, 112 ղռ. 50 կոպ.

Խմբագիր-Հրատարակիչ՝

Ալ. Տէր-Վարդանեան

Տնօրէն՝ Միհրան Բաղդասարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄԻՏՔ“-Ի

Խմբագրութեանն է յանձնուած.

ՀԱՄԲՈՒՐԳ—ԱՄԵՐԻԿԵԱՆ

Գերմանական շոգենաւային մեծագոյն ընկերութեան Ատրպատականի գեներալ ագենտութեան Ամերիկա գնացողները թող դիմեն խմբագրութեանս և ստանան նաւային տոմսակներ։ Մանրամասնութիւնները յաջորդիւ։